ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 փետրվարի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

17
(3226)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈԽՆԱԽԱՐԱՐ ՆԱՆՈՒՇՅԱՆԻ ՉԱԽՈՂԱԾ ԾՐԱԳԻՐԸ ԲՈՒՆՑ Է ԱՌԱՔԱՑՐԵԼ

Երեկ ՀՀ Ազգային Ժողովի դիմաց հավաքվել էին մի խումբ ակտիվիստ բժիշկներ, որոնք պահանջում էին խորհրդարանական լսումներ անցկացնել Առողջապահության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման թեմայով: Նրանց համոզմամբ՝ ծրագիրը բժշկական հանրության շրջանում բազմաթիվ հարցեր է առաջացրել, որոնց առ այսօր հստակ պատասխաններ չեն տրվել:

«Մենք պահանջում ենք բաց, մասնագիտական քննարկում Ազգային Ժողովում: Չի կարելի նման ծավալի ռեֆորմ իրականացնել առանց ոլորտի լայն մասնակցության: Մեզ ասում են՝ հարմարվեք, բայց մենք ուզում ենք հասկանալ՝ ինչին»,- նշում էր ակցիայի մասնակիցներից մեկը:

Մեկ այլ բժիշկ ընդգծեց. «Համապարփակ ապահովագրությունը կարող է լինել արդյունավետ գործիք, բայց ներկայիս տարբերակով այն բազմաթիվ ռիսկեր է պարունակում՝ սկսած ֆինանսավորման մոդելից մինչեւ բժշկական կազմակերպությունների բեռի ավելացում: Մինչեւ այդ հարցերը չքննարկվեն, մենք չենք կարող լռել»:

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է, որ Առողջապահության համապարփակ ապահովագրության ծրագրի մշակման վրա տարիներ շարունակ աշխատել է առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը: Ինչպես հայտնի է, ծրագրի նախնական փուլերում արձանագրված մի շարք խնդիրներ եւ ոլորտի դժգոհությունները փաստացի ձախողել են դրա արդյունավետ մեկնարկը:

Նախարար Անահիտ Ավանեսյանը ստիպված է եղել ամբողջությամբ իր վրա վերցնել ծրագրի ներդրման քաղաքական պատասխանատվությունը եւ գործընթացը առաջ տանել արդեն սեփական վերահսկողությամբ:

Միեւնույն ժամանակ, նախարարությունում շրջանառվում են խոսակցություններ, թե Լենա Նանուշյանը շարունակում է պահպանել սերտ հարաբերություններ առողջապահության նախկին նախարար, ներկայումս աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանի հետ: Մարդ, ով եղել է այսօրվա նախարար Անահիտ Ավանեսյանի ղեկավարը:

Երեւանի բժշկական կենտրոնի կասեցված լիազորություններով տնօրեն Արամ Նիկողոսյանը Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի եւ իր ընկեր, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հետ փետրվարի 16-ին մասնակցել է հիվանդանոցի ԿՏ-ի կաբինետի բացման արարողությանը այն դեպքում, երբ Նիկողոսյանի լիազորությունները փետրվարի 6-ի դրությամբ արդեն հենց նույն նախարարի հրամանով դադարեցված են ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի պահանջով: ArmLur.am-ի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեից հաստատել են. «Արամ Նիկողոսյանին մեղադրանք է առաջադրվել իրեն վստահված խոշոր չափերով գույքի հափշտակության եւ խմբի կազմում փաստաթղթեր կեղծելու հատկանիշներով: Նրա պաշտոնավարումը կասեցված է փետրվարի 6-ից՝ Կոմիտեի պահանջով»: Ըստ որոշ տեղեկությունների՝ տնօրենը նաեւ աշխատանքի է ընդունել իր հարազատին, ով աշխատանքի չի հաճախել, սակայն ստացել է աշխատավարձ: Հավելենք, որ խմբագրության տրամադրության տակ է հայտնվել նաեւ Նիկողոսյանին պաշտոնից ազատելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ին ինքնասպան եղած նախկին դատախազ Տիգրան Սուքիասյանի ողբերգական դեպքից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, նախկին դատախազ Տիգրան Սուքիասյանի մտերիմները պատմեցին, որ նա հոգեբանորեն խիստ ընկճված վիճակում է եղել, քանի որ ազատել էին իր հարազատ դատախազական համակարգից: Հիշեցնենք, որ նա դատախազի պաշտոնից ազատվել էր 2024 թվականին: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2023 թվականի դեկտեմբերի եւ 2024 թվականի հունվարի հրամաններով՝ դատախազությունում տեղի էին ունեցել կադրային մի շարք փոփոխություններ: Արդյունքում, Սյունիքի կայազորի զինվորական դատախազության դատախազ Տիգրան Սուքիասյանն ազատվել էր զբաղեցրած պաշտոնից: ArmLur.am-ը հայտնել էր, որ առեղծվածային ու ողբերգական դեպք է եղել Երեւանում: ArmLur.am-ի հավաստի տեղեկությունների համաձայն՝ Հաղթանակ կամրջի տակ՝ Հրազդան գետում, հայտնաբերվել էր նախկին դատախազի դին: Ըստ նրա մտերիմների՝ Տիգրան Սուքիասյանը կարմիր դիպլոմով ավարտել էր Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, արդարամիտ, սկզբունքային եւ մարդասեր անձնավորություն էր, որեւէ մեկի հետ անձնական խնդիրներ կամ վնասակար սովորություններ չի ունեցել, ուներ գեղեցիկ ընտանիք, մանկահասակ դուստր:

⇨ ***էջ 4***

Իրան-Ռուսաստան բիզնես խորհրդի նախագահ Լեոնիդ Լոժեչկոն հայտարարել է, որ Թեհրանը եւ Մոսկվան ունեն մեծ ներուժ տարեկան առեւտրի շրջանառությունը 10 միլիարդ դոլարից ավելի բարձրացնելու համար: Նա նշել է, որ երկու երկրների միջեւ բիզնեսի ընդլայնման եւ զարգացման հեռանկարը կբարելավվի Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջեւ մաքսային համաձայնագրերի իրականացման շնորհիվ: Լոժեչկոն կոչ է արել երկու երկրների մասնավոր հատվածի ներկայացուցիչներին հնարավորինս ջանքեր գործադրել երկկողմ առեւտրի մակարդակը բարձրացնելու համար: Նա ընդգծել է, որ անհրաժեշտ է ստեղծել ռուսաստանյան եւ իրանական ձեռնարկատերերի տվյալների բանկ, ովքեր պատրաստ են համագործակցել այս ուղղությամբ: Բացի այդ, ռուսական կողմը պետք է ամրապնդի տեղեկատվական միջավայրը եւ Իրանի ընկերությունների համար ստեղծի առավել լավ պայմաններ Ռուսաստանում:

ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅՈՒՆ

«ԻՄ ՀԱՎԱՏՔԸ ԵԿԵՂԵՑԻՆ Է»

ArmLur.am-ի հեռ զրույցում ՀՀ Ժողովրդական արտիստ Հրանտ Թոխատյանն անդրադարձավ Եկեղեցի-պետություն հարաբերություններին, Արցախի կորստին, անկախության տարիներին թույլ տված սխալներին:

-Պարոն Թոխատյան, երկար ժամանակ մշակույթի ակունքներում եք եղել եւ որպես ՀՀ քաղաքացի շատ լավ գիտեք եւ ճանաչում եք Հայաստանը, կխնդրեմ նշեք, թե ինչպես եք այս օրերին հետեւում եկեղեցի-պետություն հարաբերություններին:

-Բնականաբար, որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի՝ իմ միտքն իմ երկրի հետ է, մասնավորապես իմ քաղաքի, եւ փորձում եմ բոլոր ընտրությունների ժամանակ հատկապես այս տարբեր քաղաքական ուժերի ներկայացրած ծրագրերի հետ ծանոթանալ եւ հասկանալ՝ ինչի են ուզում գալ իշխանության, ինչ պատճառով են ուզում փոխել այս իշխանությունը, ինչպես են պատկերացնում իրենց ապագան, եւ դա ինձ նույնպես հետաքրքիր է:

Ես չեմ հասկանում այն մարդկանց, ովքեր ասում են՝ ես քաղաքականությունից հեռու եմ, այո՛, հնարավոր է լինես քաղաքականությունից հեռու, բայց քո երկրի սոցիալական ծրագրերը չեն կարող քեզ չհետաքրքրել: Այդ պատճառով էլ փորձում եմ հնարավորինս բաց չթողնել:

-Մշակութային ասպարեզը ներկայացնող շատ գործիչներ հիմնականում խուսափում են իրենց քաղաքական գնահատականները հնչեցնել, բայց Դուք, կարելի է ասել, գետի հոսանքին հակառակ եք գնում, մտավախություն չունե՞ք, որ կթիրախավորվեք:

-Ո՛չ, այդպիսի մտավախություն չունեմ, քանի որ իմ արած գործի մեջ ես վստահ եմ, իսկ ինչո՞ւ են ոմանք խուսափում կամ չեն մասնակցում այս ամեն ինչին, ինձ համար դժվար է դա հասկանալը, որովհետեւ դուրս գալը բեմ եւ կյանքում խուսափել ամեն ինչից իրար հակասում են՝ անկախ նրանից, թե ինչ թեմայով ես անում քո ներկայացումները, ֆիլմերը, համերգները եւ այլն:

Պետք է դու ծանոթ լինես եւ քո կարծիքը ունենաս ու փորձես այդ քո կարծիքով կիսվել քո հանդիսատեսի հետ, թե ինչպես դա կստացվի, դա արդեն մեկ այլ հարց է, բայց կարեւորը, որ դու չխուսափես այդ ամեն ինչից:

-Ի՞նչ փոփոխություններ եք ակնկալում համապետական ընտրություններից:

-Կարող եմ ասել՝ ես ամբողջովին փոփոխություն եմ ակնկալում, քանի որ առաջ նույնպես ես դա էի ուզում: Նախկին իշխանությունների ժամանակ ես նորից իմ կարծիքը ունեի, չնայած ոչ միշտ էր համընկնում տվյալ իշխանության կարծիքի հետ: Անկեղծ, ինձ սկզբից թվում էր, որ երիտասարդ ուժեր են գալիս եւ ինչ-որ թարմություն կմտնի հանրապետության մեջ, բայց պարզվեց, որ, ընդհակառակը, փոխանակ պրոգրես ապրենք, մենք ռեգրես ապրեցինք, չնայած այդ ամենը ներկայացվում է գեղեցիկ գույներով, որ ամեն ինչ շատ լավ է, բայց այդպես չի կարելի: Պետք է փորձել երկիրը ոտքի կանգնեցնել եւ տանել առաջ:

-Գործող իշխանությունը ասում է, որ եկեղեցին բավականին քաղաքականացված է եղել, եւ հոգեւոր ծառայություն իրականացնելու փոխարեն քաղաքական քարոզներ է իրականացրել, իսկ եկեղեցին էլ ասում է՝ այս ամենը սկսվել է այն ամենից հետո, երբ Վեհափառը Շվեյցարիայում բարձրացրել է Արցախի հարցը: Արդյո՞ք այստեղ նորից Արցախի մոռացության շեշտն է դրված:

-Գիտեք, տվյալ դեպքում ինձ չի հետաքրքրում, թե ինչ է ասում իշխանությունը, ու առանձնապես չի հետաքրքրում, թե ինչպես է արդարանում եկեղեցին: Ես կարծում եմ, որ սա անողնաշարություն եւ հիմարություն է՝ գնալ եկեղեցու դեմ, որովհետեւ երբ դու գնում ես որեւէ քահանայի դեմ, գնում ես եկեղեցու դեմ:

Ըստ Սահմանադրության՝ այո՛, պետությունը իրավունք չունի խառնվել եկեղեցական գործերի մեջ, բայց զրուցել ու փորձել իրար հասկանալը ոչ մեկ չի խանգարում, սրբազաններին նստեցնել բանտ՝ դա սրբապղծություն է:

Իմ Վեհափառը Կաթողիկոսն է, ով էլ որ կլինի, իմ առաջնորդը եւ իմ հավատքը եկեղեցին է, եւ ես իմ տեղում թույլ չեմ տա, որպեսզի կպնեն եկեղեցուն:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐԻ 2»-Ը ԱՐԴԵՆ ՉԱԽՈՂՎԵԼ Է

ԼՀԿ ղեկավար Էդմոն Մարուքյանը գրում է.

««Գյումրի 2»-ը արդեն փորձարկվել է եւ ձախողվել Վաղարշապատում:

Վերջին շրջանում թե՛ իշխանությունները, թե՛ ընդդիմադիրները քննարկում են «Գյումրի 2»-ը:

Իբր կա հնարավորություն, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններում կկրկնվի նախորդ տարի Գյումրիում տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների սցենարը:

Սակայն այդ բոլոր վերլուծություններում ուշադրություն չի դարձվում մի շատ կարեւոր նրբության վրա. Գյումրիի ընտրություններից հետո տեղի ունեցան Վաղարշապատի ընտրությունները, որտեղ փորձ արվեց կրկնել Գյումրիի սցենարը, բայց դա ավարտվեց ֆիասկոյով ու պարտությամբ՝ ոչինչ չստացվեց:

Չստացվելու պատճառների մասին շատ ենք խոսել, բայց տեսնում եմ հետեւություն անողներ չկան, իսկ այս պահին պարզապես կարեւոր է արձանագրել, որ «Գյումրի 2» սցենարը արդեն մեկ անգամ չի աշխատել, ավելին՝ չի աշխատելու նաեւ ապագայում:

Փակե՛ք այդ թեման, որպեսզի հետո ամոթով չմնաք»:

ՀՐԱՎԻՐԵԼ ԵՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Պետական եկամուտների կոմիտեի Արեւմտյան մաքսատուն-վարչության նախկին պետ Վլադիմիր Թամրազյանն ու ընտանիքի անդամները 2026թ. փետրվարի 25-ին հրավիրվել են Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: 2023թ. մարտի 13-ին սկսվել է Վլադիմիր Ֆելիքսի Թամրազյանին պատկանող գույքի առնչությամբ ուսումնասիրություն: Նախնական արդյունքներով կազմվել է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ամփոփագիր:

Դատախազություն են հրավիրվել նաեւ Վլադիմիր Թամրազյանի կինը՝ Ռեբեկա Աբրահամյանը, մայրը՝ Մարիա Թամրազյանը, քույրը՝ Սոնա Թամրազյանը, որդիները՝ Հովիկ եւ Ֆելիքս Թամրազյանները եւ այլ փոխկապակցված անձինք, որպեսզի ծանոթանան գործի նյութերին, ներկայացնեն դիրքորոշում:

Նշենք, որ Վլադիմիր Թամրազյանը ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի դստեր ամուսինն է:

Դատախազությունն այս փուլում չի հանրայնացնում, թե ինչ գույք է ցանկանում բռնագանձել: Պատճառաբանում են, որ սեփականատերերի՝ գործի նյութերին ծանոթանալուց, դիրքորոշում, ապացույց ներկայացնելուց հետո հնարավոր է փոփոխվի ենթադրյալ բռնագանձման ենթակա գույքի ցանկը: Այդ իսկ պատճառով ձեռնպահ են մնում նախապես գույքի ցանկ հրապարակելուց:

ՀՅԴ ԺՈՂՈՎ

ՀՅԴ Բյուրոյի հրավերով փետրվարի 19-20-ին Երեւանում տեղի ունեցավ ՀՅ Դաշնակցության ղեկավար մարմինների ընդլայնված խորհրդաժողով՝ մասնակցությամբ ավելի քան 20 երկրների ՀՅԴ կազմակերպական կառույցների ներկայացուցիչների:

Խորհրդաժողովում հանգամանալի քննարկվեցին աշխարհասփյուռ հայության եւ հայոց պետականության առջեւ ծառացած հիմնախնդիրներն ու մարտահրավերները, այդ ուղղությամբ համակարգված, ցանցային աշխատանքների իրականացման հարցերը:

Առանձնահատուկ շեշտվեց ազգային ինքնության, ազգային արժեքների, արցախահայության իրավունքների պաշտպանության եւ մեր պետականության անվտանգային մարտահրավերների ու սպառնալիքների դիմագրավման գործում հետեւողական եւ միասնական ուժերով բոլոր ճակատներում աշխատանքները շարունակելու կարեւորությունը:

ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Հայաստանի Հանրապետության եւ Զիմբաբվեի Հանրապետության միջեւ տեղի են ունեցել առաջին քաղաքական խորհրդակցությունները՝ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Ռոբերտ Աբիսողոմոնյանի եւ Զիմբաբվեի արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարության մշտական քարտուղար Ալբերտ Չիմբինդիի գլխավորությամբ:

Այս մասին հայտնում է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ նշելով, որ խորհրդակցություններին նախորդել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության եւ Զիմբաբվեի Հանրապետության արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարարության միջեւ քաղաքական խորհրդակցություններ անցկացնելու վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի ստորագրումը:

Խորհրդակցությունների ընթացքում կողմերն անդրադարձել են երկկողմ օրակարգի ընդլայնման, այդ թվում՝ գյուղատնտեսության, կրթության, տեղեկատվական տեխնոլոգիաների, կարողությունների զարգացման եւ առեւտրատնտեսական ոլորտներում համագործակցության խթանման հեռանկարներին:

Զրուցակիցներն ընդգծել են բազմակողմ հարթակների եւ միջազգային կազմակերպությունների շրջանակներում երկու երկրների միջեւ փոխգործակցության շրջանակի ընդլայնման եւ առկա համագործակցության խորացման կարեւորությունը:

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Ռոբերտ Աբիսողոմոնյանը ներկայացրել է 2026 թվականին Երեւանում կայանալիք Կենսաբանական բազմազանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի անցկացման հարցում Հայաստանի առաջնահերթությունները: Կարեւորվել է համաժողովի ընթացքում ներառական եւ բազմաշահառու մասնակցության ապահովումը կենսաբազմազանության եւ բնապահպանության հարցերի շուրջ արդյունավետ եւ թիրախային քննարկումների անցկացման համար: ԱԳ նախարարի տեղակալը շեշտել է նաեւ COP17-ի շրջանակներում նախատեսվող Առաջնորդների գագաթնաժողովի կարեւորությունը:

ՀՀ ԱԳՆ-ից նշում են, որ զրուցակիցներն անդրադարձել են նաեւ տարածաշրջանային եւ միջազգային օրակարգի՝ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակի, այդ թվում՝ Հարավային Կովկասում խաղաղության ինստիտուցիոնալացման գործընթացին եւ Անդրսահարյան Աֆրիկայում տեղի ունեցող վերջին զարգացումներին:

ՀԵՏԱՁԳՎԵՑ

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը ստորագրել է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքների փաթեթը:

Ըստ այդմ՝

• աշխատանքային պայմանագրերի կնքումը, փոփոխումը եւ լուծումը բացառապես թվային համակարգով իրականացնելու պահանջը տեղափոխվել է 2027թ. հուլիսի 1 (մինչ փոփոխությունը պահանջը նախատեսված էր 2026թ. հունվարի 1-ով),

• մինչեւ 2027թ. հուլիսի 1-ը թվային համակարգով պայմանագրերի կնքումը կրելու է կամավոր բնույթ, իսկ համակարգով կնքված պայմանագրերը, համաձայնագրերն ու ընդունված հրամաններն ունենալու են իրավական ուժ: Սահմանվել է նաեւ անցումային կարգավորում, որով ժամկետի երկարաձգման փոփոխությունները տարածվելու են նաեւ 2026թ. հունվարի 1-ից հետո ծագած աշխատանքային հարաբերությունների վրա,

• գործող աշխատանքային պայմանագրերը մինչեւ 2026թ. դեկտեմբերի 31-ը պարտադիր թվային համակարգ մուտքագրած լինելու ժամկետը եւս երկարաձգվել է մինչեւ 2028թ. հունիսի 30-ը,

ՀՀ-ից դուրս գտնվող անձի հետ (աշխատանքը կատարվելու է ՀՀ-ից դուրս այլ վայրում) աշխատանքային հարաբերությունների ծագումը, փոփոխումը եւ դադարումը թվային համակարգի միջոցով չի իրականացվելու,

ՀՀ-ում գտնվող օտարերկրացիների, փախստականների, ապաստան հայցողների համար նախատեսվել են առանձին կարգավորումներ, համաձայն որոնց՝ 2027թ. հուլիսի 1-ից հետո եւս աշխատանքային պայմանագրերը կնքվելու են թղթային եղանակով՝ պայմանով, որ ՀՀ-ում օրինական բնակությունը հաստատող փաստաթուղթ ստանալուց հետո 3-ամսյա ժամկետում կնքված պայմանագրերը օրենսդրությամբ սահմանված կարգով մուտքագրվեն թվային համակարգ:

ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Դատարանը 3 ամսով երկարաձգել է «18 արդարների» գործով մեղադրյալ Կարո Օկումուշյանի տնային կալանքի ժամկետը: Համապատասխան որոշումը կայացրել է դատավոր Կարեն Ֆարխոյանը՝ փետրվարի 23-ի նիստում բավարարելով մեղադրող կողմի միջնորդությունը:

Պաշտպանական կողմը միջնորդել է ազատ արձակել նրան՝ ընդգծելով, որ մեղադրյալը կապ չունի քաղաքականության հետ, մեղքը չի ընդունում, իսկ տնային կալանքի տակ գտնվելը ոչ միայն խոչընդոտում է հարազատների հետ նրա շփումներին, այլեւ անդրադառնում է ընտանիքի ֆինանսական վիճակի վրա:

Հիշեցնենք, որ խոսքը արքեպիսկոպոս Բագրատ Գալստանյանի դատավարության մասին է:

ԸՆՏՐՈՎԻ ՄՈՏԵՑՈՒՄ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ԴԵՄ

ArmLur-ին հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանը տեղեկացրել է, որ իր ներկայացրած հանցագործության մասին հաղորդումը՝ ուղղված ՀՀ գլխավոր դատախազին, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը չկատարելու հիմքով, դրական զարգացում է ստացել: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը պետք է հայտնվի մեղադրյալի աթոռին:

Էդգար Ղազարյանի տեղեկացմամբ՝ ՀՀ Քննչական կոմիտեի Շենգավիթի բաժնի քննիչներից մեկը կազմել է արձանագրություն՝ դատավճիռը չկատարելու առիթով քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ, ինչը նշանակում է, որ գործում միակ դերակատար Արթուր Հովհաննիսյանի նկատմամբ անխուսափելիորեն պետք է մեղադրանք առաջադրվի: Էդգար Ղազարյանը նաեւ երեք միջնորդություն է ներկայացրել քննիչին, քանի որ Արթուր Հովհաննիսյանը, լինելով պաշտոնատար անձ, այդ դիրքն օգտագործելով է հրաժարվել կատարել վճիռը, ինչը ծանրացնում է պատիժը:

Ի՞նչ է տեղի ունեցել

Հիշեցնենք, որ 2023 թվականի ապրիլի 4-ին Ազգային Ժողովի Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի նիստում Արթուր Հովհաննիսյանը հրապարակային հայտարարությամբ սպառնացել էր կտրել ընդդիմադիր թեկնածու Էդգար Ղազարյանի լեզուն եւ ականջները: Դեպքը լայն արձագանք էր ստացել թե՛ քաղաքական, թե՛ իրավապաշտպան շրջանակներում:

Դատարանը հետագայում այդ հայտարարությունների համար Հովհաննիսյանին պարտավորեցրել է վճարել 1 մլն 250 հազար դրամ փոխհատուցում՝ հօգուտ Ղազարյանի: Գումարը վճարվել է, սակայն, ինչպես «Ժողովուրդ»-ին հայտնել է Ղազարյանը, Հովհաննիսյանը հրաժարվում է հրապարակային ներողություն խնդրել՝ չկատարելով վճռի ոչ նյութական մասը:

Նոր զարգացում. քննիչը արձանագրություն է կազմել

Ղազարյանի հաղորդման հիման վրա դատախազությունը նյութերն ուղարկել է ՀՀ քննչական կոմիտե: Նրա փոխանցմամբ՝ Շենգավիթի քննչական բաժնում քննիչը կազմել է արձանագրություն՝ դատարանի վճիռը չկատարելու առիթով քրեական վարույթ նախաձեռնելու մասին:

Սա գործընթացի էական փուլ է. արձանագրության կազմումը նշանակում է, որ իրավապահ մարմինները տեսնում են քրեական գնահատականի հիմք եւ անցնում իրավական ընթացակարգի հաջորդ փուլին:

Ի՞նչ ընթացակարգ է սպասվում

Քանի որ գործով միակ դերակատարը գործող պատգամավոր է, քրեական հետապնդում սկսելու համար անհրաժեշտ է Ազգային Ժողովի համաձայնությունը: Այսինքն՝ քննչական մարմինը պետք է դիմի դատախազին, որպեսզի նա միջնորդություն ներկայացնի ԱԺ-ին՝ պատգամավորի նկատմամբ մեղադրանք առաջադրելու թույլտվություն ստանալու համար:

Հենց այս փուլում է հարցը ստանում նաեւ քաղաքական հնչեղություն. արդյոք խորհրդարանական մեծամասնությունը կտա համաձայնություն սեփական խմբակցության քարտուղարի նկատմամբ քրեական հետապնդում սկսելու համար:

Ընտրովի մոտեցում

Էդգար Ղազարյանը «Ժողովուրդ»-ի հետ զրույցում հիշեցրել է, որ դատարանի վճռի կատարմանը խոչընդոտելու հիմքով քրեական հետապնդումներ են իրականացվել նաեւ հոգեւորականների նկատմամբ, ընդհուպ՝ Գարեգին Բ-ի գործով նախաձեռնված գործընթացների շրջանակում: Նրա գնահատմամբ՝ օրենքի առաջ բոլորը պետք է հավասար լինեն, եւ նույն մոտեցումը պետք է կիրառվի նաեւ պատգամավորի դեպքում:

Նախկին միջադեպ

Հիշեցնենք նաեւ, որ Արթուր Հովհաննիսյանի անունը նախկինում եւս հայտնվել էր հանրային քննարկումների կենտրոնում. 2017 թվականին նա ոստիկանություն էր տարվել, եւ նրա ավտոմեքենայից հայտնաբերվել էր 0.24 մգ թմրանյութ: Այդ պատմությունը եւս ժամանակին լայնորեն քննարկվել էր մամուլում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊՈՒՏԻՆԻ ՍԿՍԱԾԸ

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարել է, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը փաստացի սկսել է «Երրորդ համաշխարհային պատերազմը», եւ նրան կանգնեցնելու միակ ճանապարհը ուժեղացված ռազմական եւ տնտեսական ճնշումն է:

BBC-ին տված հարցազրույցում Զելենսկին ընդգծել է, որ Ուկրաինան չի պատրաստվում զիջել ռազմավարական նշանակության տարածքներ՝ հանուն հրադադարի: Նրա խոսքով՝ ռուսական կողմի պահանջը, որով Ուկրաինան պետք է հրաժարվի Դոնեցկի մարզի այն 20 տոկոսից, որը դեռեւս իր վերահսկողության տակ է պահում, ինչպես նաեւ հարավային Խերսոնի եւ Զապորոժիեի շրջանների մի շարք տարածքներից, անընդունելի է:

«Ես դրան այլ կերպ եմ նայում: Խոսքը պարզապես հողի մասին չէ: Դա նշանակում է թուլացնել մեր դիրքերը եւ լքել հարյուր հազարավոր մեր քաղաքացիներին, ովքեր այնտեղ են ապրում: Այդպիսի «նահանջը» կմասնատի մեր հասարակությունը»,-նշել է Զելենսկին:

Նա հավելել է, որ նման քայլը կարող է ժամանակավորապես բավարարել Պուտինին, սակայն, ըստ նրա, դա կլինի ընդամենը կարճ դադար: «Նրան դադար է պետք: Մեր եվրոպացի գործընկերների գնահատմամբ՝ դա կարող է տեւել երեքից հինգ տարի: Իմ կարծիքով՝ նույնիսկ ավելի քիչ՝ առավելագույնը երկու տարի: Իսկ հետո ո՞ւր կշարժվի նա՝ մենք չգիտենք, բայց որ կցանկանա շարունակել պատերազմը, դա փաստ է»,-ասել է Ուկրաինայի նախագահը:

Զելենսկին համոզմունք է հայտնել, որ Ուկրաինան, չնայած մարտահրավերներին, ի վերջո կհաղթի պատերազմում եւ չի համաձայնի իր տարածքային ամբողջականության հաշվին ձեռք բերված հրադադարի:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՀԱՋԱՆԳԸ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշը հայտարարել է, որ ամբողջ աշխարհում մարդու իրավունքները ենթարկվում են հարձակումների՝ նշելով միջազգային իրավունքի լայնածավալ խախտումները եւ քաղաքացիական բնակչության տառապանքները Սուդանում, Գազայում եւ Ուկրաինայում:

«Օրենքի գերակայությունը ճնշվում է ուժի գերակայության կողմից»,-այս մասին նշել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը՝ ելույթ ունենալով Ժնեւում Մարդու իրավունքների խորհրդի բացման ժամանակ:

Reuters-ի փոխանցմամբ, Գուտերեշն ասել է, որ մարդու իրավունքները դիտավորյալ հետ են մղվում: Նա կոչ է արել անդամ պետություններին չդիտարկել մարդու միջազգային իրավունքները որպես ընտրության հնարավորություն:

Գուտերեշը վճռականորեն պաշտպանել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների համակարգը, որը, նրա համոզմամբ, գտնվում է «գոյատեւման ռեժիմում»՝ ֆինանսավորման կրճատումների, որոշ փորձագետների վրա հարձակումների եւ Միացյալ Նահանգների՝ մարդու իրավունքների հաշվետվողականության հիմնական մեխանիզմներից մեկից դուրս գալու պատճառով:

«Մարդասիրական կարիքները արագորեն աճում են, մինչդեռ ֆինանսավորումը կրճատվում է», - արձանագրել է նա:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների գրասենյակը, ինչպես կազմակերպության մյուս մասերը, բախվում է բյուջետային դեֆիցիտի խնդրի հետ՝ ՄԱԿ-ի ամենամեծ դոնոր Միացյալ Նահանգների եւ այլ կառավարությունների կողմից ֆինանսավորման կրճատումների պատճառով:

ՄԱԿ-ի խոսնակն օրեր առաջ հայտնել էր, որ Վաշինգտոնը փետրվարին վճարել է ՄԱԿ-ին պարտք ավելի քան 4 միլիարդ դոլարից մոտ 160 միլիոն դոլարը:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԷՐ

Փետրվարի 21-ին սպանություն է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 13:00-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության ոստիկանության բեռական ոստիկանության գլխավոր վարչության Գեղարքունիքի վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ դանակահարված վիճակում Սեւանի բժշկական կենտրոն է տեղափոխվել մի քաղաքացի:

Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, հիվանդանոց են մեկնել Գեղարքունիքի մարզային քրեական վարչության ծառայողները՝ վարչության պետ Սանթուր Դուրգարյանի գլխավորությամբ: Արդեն հիվանդանոցում բժիշկները քրեական ոստիկաններին հայտնել են, որ վիրավորը գտնվում է ծայրահեղ ծանր վիճակում եւ ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու:

Քրեական ոստիկանները պարզել են, որ վիրավորը Տավուշի մարզի բնակիչ 20-ամյա Արամ Խաչատրյանն է, որը հիվանդանոց է տեղափոխվել Սեւան քաղաքի կենտրոնական հրապարակից, ու մինչ պարզում էին դեպքի հանգամանքները, հիվանդանոցից ահազանգ է ստացվում, որ վիրավորը, գիտակցության չգալով, մահացել է:

Դեպքի փաստով ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժնում սպանություն հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ Գեղարքունիքի մարզի քրեական ոստիկանները ու Սեւանի քննչական բաժնի քննիչները պարզել են դեպքի հանգամանքները եւ կասկածյալներից 2-ին հայտնաբերել են: Մահացածին զանգահարել եւ կանչել են Սեւան եւ առանց որեւէ բան քննարկելու՝ միանգամից նրան դանակի հարվածներ են հասցրել:

ArmLur.am-ին դեպքից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, 20-ամյա ՊՆ զինծառայողին սպանել են աղջկա պատճառով: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ 20-ամյա Արամին դանակահարողները անչափահասներ են: Վերջիններս ձերբակալված են:

Մեզ հասած լուրերով՝ ձերբակալվածներն են Մ. Ն.-ն եւ Ա. Ա.-ն:

Իսկ ավելի ուշ Գլխավոր դատախազությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ 21.02.2026 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Նույն օրը ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով Ն. Մ.-ի եւ Ա. Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում:

Որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը՝ 1 ամիս ժամկետով:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը հայտնել էր, որ Սեւանում դանակի հարվածներից մահացած 20-ամյա Արամ Խաչատրյանը ՊՆ պայմանագրային զինծառայող էր, «Պաշտպան հայրենյաց» ծրագրի մասնակից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱԽԱԶԻ ԴԻՆ՝ ԳԵՏՈՒՄ

Փետրվարի 22-ին առեղծվածային ու ողբերգական դեպք է եղել Երեւանում: ArmLur.am-ի հավաստի տեղեկությունների համաձայն՝ Հաղթանակի կամրջի տակ՝ Հրազդան գետում, հայտնաբերվել է նախկին կայազորի դատախազ Տիգրան Սուքիասյանի մարմինը:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ մահացածի մարմինը գետից դուրս բերելու համար ահազանգով ժամանել են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Երեւանի հրշեջ-փրկարարական ջոկատներից մեկի փրկարարները:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն, ըստ նախնական վարկածի՝ ինքնասպան եղած նախկին դատախազ Տիգրան Սուքիասյանը Ազգային բյուրո պետական ոչ առեւտրային կազմակերպության (ՊՈԱԿ)-ի ղեկավար Արգամ Հովսեփյանի աներձագն էր:

Նա դատախազի պաշտոնից ազատվել էր 2024 թվականին: Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2023 թվականի դեկտեմբերի եւ 2024 թվականի հունվարի հրամաններով՝ դատախազությունում տեղի էին ունեցել կադրային մի շարք փոփոխություններ: Արդյունքում, Սյունիքի կայազորի զինվորական դատախազության դատախազ Տիգրան Սուքիասյանն ազատվել էր զբաղեցրած պաշտոնից:

Ք. Մ.

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ

Փետրվարի 22-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 16:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Սուրբ Սարգիս եկեղեցու դիմացի ձորում դի կա:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամանել է ոստիկանության Կենտրոնական բաժնի հերթապահ խումբը՝ օրվա պատասխանատու հերթապահի գլխավորությամբ:

Դեպքի վայր են ժամանել նաեւ ՀՀ ԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի 2-րդ վաշտի պարեկները՝ գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի, գումարտակի հրամանատար Գոռ Առաքելյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի եւ վաշտի հրամանատար Հայկ Արոյանի գլխավորությամբ:

Տեղում պարզվել է, որ ստացված օպերատիվ տեղեկությունը հավաստի է: Նշված վայրում հայտնաբերվել է տղամարդու դի: Տարածքը սահմանազատել են պարեկներ Ռազմիկ Ղարիբյանն ու Արտյոմ Գասպարյանը:

Դեպքի մասին ոստիկանության Կենտրոնական բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական 1-ին բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ բաժնի պետի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում է մահացածի ինքնությունը: Ըստ նախնական տեղեկությունների՝ տղամարդը Սուրբ Սարգիս եկեղեցու դիմացի քարե պատնեշի վրա նստած է եղել, երբ անզգուշաբար վայր է ընկել:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ կան նաեւ դեպքին ականատես վկաներ, որոնք այդ մասին հայտնել են իրավապահներին, սակայն իրավապահները այդ տեղեկությունը, ինչպես նաեւ մահացածի ինքնությունը, ճշտում են:

ԲՌՆԱԳԱՆՁԵԼ ԵՆ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը, հայտնում են գլխավոր դատախազությունից:

«Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ 2000-2019 թվականներին ՀՀ պետական եկամուտների նախարարությունում եւ Ոստիկանությունում տարբեր պաշտոններ զբաղեցրած Միհրան Վաչիկի Դավթյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

14 անշարժ գույք.

6 տրանսպորտային միջոց.

2 իրավաբանական անձանցում մասնակցություն.

Բանկերում ներդրված 792 հազար դրամ եւ 24 հազար ԱՄՆ դոլար ավանդ.

5 միլիոն դրամ չվերադարձված փոխառության պահանջի իրավունք.

270 միլիոն 151 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ.

796 միլիոն 825 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Մաքսանենգ ճանապարհով ներկրված թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու վերաբերյալ հերթական օպերատիվ տվյալը Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողներն իրացրին փետրվարի 13-ին: Մայրաքաղաքի պարեկների հետ համագործակցելով՝ քրեական ոստիկանները Երեւանի Շիրակի եւ Արարատյան փողոցների խաչմերուկում ձերբակալեցին ու Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին տեղափոխեցին Արարատի մարզի բնակիչ 37-ամյա տղամարդու: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեց մեկ կիլոգրամ 218 գրամ մարիխուանա: 37-ամյա տղամարդը կալանավորվել է: Հանգամանքները պարզվում են:

ԿԱՇԱՌՔԻ ՓՈՐՁ

Վայոց ձորի մարզի պարեկները փետրվարի 17-ին Ջերմուկ քաղաքի Երեւանյան խճուղու եւ Մեսրոպ Մաշտոցի փողոցների խաչմերուկում ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու համար կանգնեցրել են «Մերսեդես» մակնիշի մեքենան: Իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չկազմելու համար 35-ամյա ուղեւորը փորձել է պարեկին 20 000 դրամ տալ: Կաշառք տալու անմիջականորեն ծագած կասկածանքով նա ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Ջերմուկի բաժին, ապա կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել նախաքննական մարմին:

ԶԵՆՔ-ԶԻՆԱՄԹԵՐՔ

Համայնքային ոստիկանության Տավուշի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Պառավաքար գյուղի 68-ամյա բնակիչը տանը ապօրինի զենք-զինամթերք է պահում: Նա ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին, որտեղ բացատրական աշխատանքի արդյունքում հայտնել է, որ ոստիկանների տեղեկությունը հավաստի է: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ 68-ամյա տղամարդու տանը հայտնաբերվել են երկու ինքնաձիգ, տարբեր տրամաչափի 104 փամփուշտ, ինքնաձիգի փամփշտատուփեր:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 15-ին Համայնքային ոստիկանության Թումանյանի բաժին հաղորդում էր ստացվել, որ փետրվարի 13-ի ժամը 9-ից փետրվարի 15-ի ժամը 15:30-ն ընկած ժամանակահատվածում, օգտվելով տանտերերի բացակայությունից, Հագվի գյուղի տներից մեկի բակից գողացել էին «ՎԱԶ-2121» մակնիշի մեքենայի չորս անվահեց՝ իրենց անվադողերով՝ տուժողին պատճառելով 250 000 դրամի վնաս: Կազմված փաստաթղթերն ուղարկվել էին նախաքննական մարմին: Նախաձեռնվել էր քրեական վարույթ: Համայնքային ոստիկանները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ գողությունը կատարել է Օձուն գյուղի 17-ամյա բնակիչը: Նա հայտնաբերվել, տեղափոխվել է Թումանյանի բաժին, որտեղ խոստովանել է արարքը եւ ներկայացրել գողոնը:

● *Հանրապետությունում փետրվարի 19-ից 20-ը, ըստ ոստիկանության տվյալների, բացահայտվել է 173 հանցագործություն, որոնցից 11-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

Ո՞ՆՑ ԵՆ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ

2025թ.-ին Տավուշի մարզպետարանը հայտարարել էր. «Կիրանց բնակավայրի եւ հարակից տարածքների զարգացման հետ կապված, որպես առաջին փուլի գործողությունների շարք, մշակվել է զարգացման ագրոզբոսաշրջության ծրագիր Տավուշի մարզի գործընկեր Ֆրանսիական Օ Դը Սեն տարածաշրջանի վարչակազմի հետ միասին: Ծրագիրը ներկայացվել է քննարկման ֆրանսիական գործընկերների մոտ, որի շրջանակում առաջարկել ենք համալիր գործողությունների իրականացում թիրախային տարածքում գյուղատնտեսական եւ զբոսաշրջային ներուժի համախմբման նպատակով»: 2025թ. օգոստոսի 18-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել, թե այդ ծրագիրն ինչ փուլում է, կոնկրետ ինչ արդյունքներ կան: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Կիրանց բնակավայրի եւ հարակից տարածքների զարգացման նպատակով կազմվել է ագրոզբոսաշրջության ծրագիր Ֆրանսիայի Օ Դը Սեն դեպարտամենտի հետ համատեղ եւ ներկայացվել դոնոր կազմակերպության քննարկմանը: Ծրագիրը հաստատվել է»: 2026թ. հունվարի 29-ին Տավուշի մարզպետին նոր հարցում եմ արել. «Որքա՞ն է այդ ծրագրի արժեքը, ե՞րբ է այն իրականացվելու, ո՞ւմ կողմից, ծրագրով ի՞նչ գործողություններ են արվելու, ի՞նչ արդյունքներ են լինելու»: Աշխատակազմից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի եւ Ֆրանսիայի Օ Դը Սեն դեպարտամենտի միջեւ կնքված 2025-2029թթ. «Ապակենտրոնացված համագործակցության համաձայնագրի» շրջանակում, Ֆրանսիայում Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ, 2026թ. հունվարին մեկնարկել է առաջին ծրագիրը՝ «Ագրոզբոսաշրջության ռազմավարության իրականացումը որպես Տավուշի մարզպետի աշխատակազմի եւ Օ Դը Սեն դեպարտամենտի ապակենտրոնացված համագործակցության բաղադրիչ»: Ծրագիրը մշակվել եւ ներկայացվել է ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից, որը կիրականացվի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագրային գործողությունների հիմնական ուղղություններն են՝ ստեղծել Տավուշի մարզի ագրոզբոսաշրջության ցանց, աջակցել ագրոզբոսաշրջային տնտեսություններին մեթոդական, ֆինանսական եւ հաղորդակցության գործիքներով, նպաստել Տավուշի մարզի այցելավայրեր կառավարման կազմակերպության կարողությունների զարգացմանը: Ծրագրի նախնական տարբերակը քննարկվել է դեռեւս 2024թ. մայիսին՝ Օ Դը Սեն դեպարտամենտի պատվիրակության Տավուշի մարզ կատարած այցի ժամանակ, որի ընթացքում ի թիվս այլ հարցերի կարեւորվել է նաեւ սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացման հնարավորությունները»: Կիրանցում ագրոբիզնես զարգացնելու ի՞նչ հնարավորություններ կան, երբ 2024թ.-ին սահմանազատման անվան տակ Կիրանցից շուրջ 15 հեկտար հող Ադրբեջանին հանձնելու հետեւանքով նվազել են գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները եւ աշնանացան ցորենի արտերը, արտավայրերի հեկտարների նվազելու հետեւանքով շուրջ 40 տոկոսով պակասել է գյուղում պահվող խոշոր եղջերավոր անասունների թիվը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՐԱՆԸ ՀԵՐՔՈՒՄ Է

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Իրանի ԱԳՆ խոսնակ Էմայիլ Բաղաեին հերքել է Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ հնարավոր ժամանակավոր համաձայնագրի վերաբերյալ շրջանառվող տեղեկությունները:

Մամուլի ասուլիսի ընթացքում Բաղաեին նշել է, որ Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ միջուկային բանակցությունների շուրջ շահարկումները նոր չեն, սակայն ընդգծել է, որ շրջանառվող որեւէ պնդում հաստատված չէ: «Մենք չենք հաստատում այդ ենթադրությունները: Ցանկացած բանակցային գործընթացի մանրամասները քննարկվում են բանակցությունների սենյակում: Ժամանակավոր համաձայնագրի մասին խոսակցությունները որեւէ հիմք չունեն»,-հայտարարել է նա:

Բաղաեին նաեւ մերժել է ԱՄՆ նախագահի հատուկ ներկայացուցիչ Սթիվ Ուիթքոֆի այն պնդումը, թե Իրանը մոտ է միջուկային զենք ձեռք բերելու կարողությանը՝ նշելով, որ ամերիկացի պաշտոնյաների հակասական հայտարարությունները նորություն չեն: Նա ընդգծել է, որ բանակցությունները, որոնք միտված են միակողմանի պահանջներ պարտադրելուն, արդյունք չեն կարող տալ: «Մենք վստահ ենք մեր դիրքորոշման իրավացիության մեջ եւ կշարունակենք գործընթացը, քանի դեռ այն կարող է արդյունքի բերել՝ հիմնվելով մեր պահանջների ամուր հիմքերի վրա՝ թե՛ միջուկային ոլորտում, թե՛ պատժամիջոցների վերացման հարցում»,-ասել է խոսնակը:

Անդրադառնալով Ատոմային էներգիայի միջազգային գործակալության ղեկավար Ռաֆայել Գրոսիի հայտարարություններին՝ Բաղաեին նշել է, որ Իրանը չի ընդունում վնասված օբյեկտների վերաբերյալ նախապայմաններ: Նրա խոսքով՝ Թեհրանը 2025 թվականին կատարել է խաղաղ միջուկային օբյեկտների տեսչությունների վերաբերյալ իր պարտավորությունները եւ շարունակել է համագործակցությունը գործակալության հետ, սակայն օտարերկրյա ռազմական հարձակումների հետեւանքով վնասված օբյեկտների հարցը առանձին խնդիր է, որի համար հստակ ընթացակարգ գոյություն չունի:

Խոսնակը նաեւ նշել է, որ տեղեկություններ չունի Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Լարիջանիի՝ Օման հնարավոր այցի մասին՝ Իրանի առաջարկների փաթեթը փոխանցելու նպատակով:

Բացի այդ, Բաղաեին անդրադարձել է Իրանի արտաքին գործերի նախարարության որոշմանը՝ ԵՄ անդամ պետությունների ռազմածովային եւ ռազմաօդային ուժերը ահաբեկչական կառույցներ ճանաչելու վերաբերյալ: Նրա խոսքով՝ այսուհետ Պարսից ծոցում եւ հարակից տարածաշրջանում ԵՄ 27 անդամ երկրների ռազմական ներկայությունը Իրանի կողմից կդիտարկվի եւ կընկալվի այլ կերպ եւ կունենա համապատասխան հետեւանքներ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ ՍԻՐԻԱՅԻՑ

ԱՄՆ զինված ուժերը սկսել են դուրսբերման գործընթացը Սիրիայից՝ լքելով երկրում գտնվող իրենց ամենախոշոր ռազմաբազան: Այս մասին հաղորդում է Al Jazeera լրատվական ցանցը:

Հեռուստաընկերության թղթակցի փոխանցմամբ՝ ամերիկյան զորքերը մեկնարկել են Սիրիայից դուրս գալու եւ Իրաքի Քրդստանի տարածաշրջան վերատեղակայվելու գործընթացը:

Ըստ հրապարակման՝ խոսքը վերաբերում է Սիրիայի հյուսիս-արեւմուտքում՝ Հասաքայի նահանգի գյուղական հատվածում գտնվող Քասրակ ռազմաբազային, որը համարվում է ԱՄՆ-ի ամենամեծ ռազմակայանը երկրում:

Դուրսբերումը, ըստ աղբյուրի, ներառում է ինչպես անձնակազմի, այնպես էլ ռազմական տեխնիկայի տեղափոխում Իրաքի Քրդստան:

Գործընթացի ծավալի, ժամկետների կամ ընդհանուր շրջանակի վերաբերյալ առայժմ հավելյալ մանրամասներ չեն հրապարակվել:

ԹՐԱՄՓԸ ԴԺԳՈՀՈՒՄ Է

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփը դժգոհել է, որ իր երկիրը չափազանց շատ հաղթանակներ է տարել: Երկրի ղեկավարը համապատասխան գրառում է կատարել Truth Social սոցիալական ցանցի իր էջում:

«Մենք չափազանց հաճախ ենք հաղթում, դա պարզապես արդար չէ»,-գրել է նա:

2025 թվականի նոյեմբերին ամերիկյան առաջնորդը ԱՄՆ զինված ուժերն անվանել էր աշխարհի ամենահզոր բանակը: Նա հավելել էր, որ Միացյալ Նահանգները ոչ միայն ունեն աշխարհի հզորագույն զորքերը, այլեւ գոյություն ունեցող բոլոր երկրների շարքում արտադրում են լավագույն ռազմական տեխնիկան:

Անցյալ տարվա սեպտեմբերի 5-ին Թրամփը հրամանագիր է ստորագրել ԱՄՆ պաշտպանության նախարարությունը «Պատերազմի նախարարություն» վերանվանելու մասին: Փաստաթղթի ստորագրման արարողության ժամանակ Սպիտակ տան տերը նշել է, որ ԱՄՆ-ն հաղթանակ է տարել թե՛ համաշխարհային երկու պատերազմներում եւ թե՛ դրանց միջեւ եղած բոլոր հակամարտություններում:

Երկրի ղեկավարը նաեւ հայտարարել է, որ «պաշտպանության նախարարություն» անվանումը չափազանց լիբերալ է: Ամերիկյան առաջնորդի կարծիքով՝ «պատերազմի նախարարություն» անվանումն ավելի տեղին է՝ «հաշվի առնելով աշխարհում տիրող իրավիճակը»:

ՀՈՒՍԱԴՐՈՂ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

Ժնեւում անուղղակի բանակցությունների ընթացքում Իրանը եւ Միացյալ Նահանգները փոխանակել են իրանական միջուկային ծրագրի շուրջ առկա տարաձայնությունները լուծելու գործնական առաջարկներ: Այս մասին X-ի գրառման մեջ նշել է Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը:

«Իրանը հանձնառու է տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ապահովմանը: Վերջին բանակցությունները ներառել են գործնական առաջարկների փոխանակումներ եւ տվել են հուսադրող ազդանշաններ: Սակայն մենք շարունակում ենք ուշի ուշով հետեւել ԱՄՆ-ի գործողություններին եւ ձեռնարկել ենք բոլոր անհրաժեշտ միջոցները հնարավոր ցանկացած սցենարի համար»,-նշել է նախագահը:

ԱՄՆ-ն եւ Իրանն Օմանի միջնորդությամբ այս տարի արդեն անցկացրել են անուղղակի բանակցությունների երկու փուլ: Փետրվարի 17-ին Ժնեւում տեղի ունեցած երկրորդ փուլից հետո երկու կողմերն էլ հայտարարել են, որ առաջընթաց է գրանցվել:

Օմանի արտաքին գործերի նախարար Բադր ալ-Բուսայիդին հաստատել է, որ Իրան-ԱՄՆ բանակցությունների հաջորդ փուլը նախատեսվում է անցկացնել Ժնեւում փետրվարի 26-ին:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ անցած փետրվարի 19-ին գրանցվել է 11 ավտովթար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՇԽԱՐՀ

ԱՎԵԼԻ ԽԻՍՏ

Էստոնիան պատրաստ է վերանայել եւ անհրաժեշտության դեպքում խստացնել Ռուսաստանի եւ Բելառուսի քաղաքացիներին ժամանակավոր բնակության թույլտվություն տրամադրելու ընթացակարգը: Ինչպես տեղեկանում ենք «ՌԻԱ Նովոստի»-ից, այդ մասին հայտարարել է Էստոնիայի ներքին գործերի նախարար Իգոր Տարոն: Եվրախորհրդարանի անդամ Յանա Տոոմը Էստոնիայի Ներքին գործերի նախարարություն հարցում էր ուղարկել ՌԴ-ի եւ Բելառուսի քաղաքացիներին ժամանակավոր բնակության թույլտվություն տրամադրելու ընթացակարգի վերաբերյալ: Նա հետաքրքրվել էր, թե ինչպես են «անորոշ անցյալ» ունեցող անձինք Էստոնիայում ժամանակավոր բնակության թույլտվություններ ստացել: «Ձեր հարցման հիման վրա մենք կվերլուծենք Ռուսաստանի եւ Բելառուսի քաղաքացիներին ժամանակավոր բնակության թույլտվություն տրամադրելու չափանիշներն ու պրակտիկան եւ անհրաժեշտության դեպքում կխստացնենք դրանք»,-պատասխանել է Տարոն: Նա պարզաբանել է, որ պետությունն իրավունք ունի որոշումներ կայացնել օտարերկրացու մուտքի, մնալու եւ արտաքսման վերաբերյալ, ուստի ժամանակավոր բնակության թույլտվության դիմումի քննարկման գործընթացը ավտոմատ կերպով չի նշանակում դրա տրամադրում: Ավելին, Իգոր Տարոն առաջարկել է արգելել Ռուսաստանի եւ Բելառուսի քաղաքացիներին, ովքեր չունեն երկարաժամկետ բնակության թույլտվություն, երկրում անշարժ գույք գնել:

20–ՐԴ ՓԱԹԵԹԸ

Եվրամիության երկրներն, ամենայն հավանականությամբ, համաձայնության չեն հասնի Ռուսաստանի դեմ պատժամիջոցների 20-րդ փաթեթի շուրջ, որը նախատեսվում էր ընդունել Ուկրաինայում ՌԴ-ի ծավալած ռազմական գործողությունների 4-րդ տարելիցի կապակցությամբ: Ինչպես տեղեկանում ենք Reuters-ից, այս մասին հայտարարել է ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալասը: ԵՄ դիվանագիտության ղեկավարի խոսքով՝ դա պայմանավորված է Հունգարիայի դիրքորոշմամբ, որը դեմ է առաջարկվող սահմանափակող միջոցներին: «Վաղը (խմբ.՝ փետրվարի 24-ին) այս սարսափելի պատերազմի չորրորդ տարելիցն է, եւ, անշուշտ, քննարկում կլինի պատժամիջոցների 20-րդ փաթեթի շուրջ: Բայց ինչպես բոլորդ գիտեք, կարծում եմ՝ այսօր դրա հետ կապված առաջընթաց չի լինի, սակայն մենք անպայման կպնդենք.... Մենք շատ լուրջ հայտարարություններ ենք լսել Հունգարիայից, եւ ես չեմ կարծում, թե նրանք կփոխեն դիրքորոշումը»,-ասել է նա Բրյուսելում Եվրամիության անդամ երկրների արտգործնախարարների հանդիպմանը ժամանելիս: Հունգարիայի արտգործնախարար Պետեր Սիյարտոն ավելի վաղ հայտարարել էր, որ Բուդապեշտը կարգելափակի Ռուսաստանի դեմ պատժամիջոցների 20-րդ փաթեթը: Այս քայլով Հունգարիան փորձում է Ուկրաինային ստիպել վերսկսել «Դրուժբա» խողովակաշարով ռուսական նավթի մատակարարումները: Սլովակիան եւ Հունգարիան Կիեւին մեղադրում են ռուսական հարվածներից վնասված խողովակաշարի վերանորոգումը դիտավորյալ հետաձգելու համար:

ԱԿԲԱ ԲԱՆԿ

ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ Է ԴՐԱՄԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Ակբա բանկը մեկնարկել է հրապարակային առաջարկով 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի տեղաբաշխումը:

Բանկը տեղաբաշխելու է տարեկան 10.25% եկամտաբերությամբ 100,000 (հարյուր հազար) դրամային պարտատոմս:

Պարտատոմսերի շրջանառության ժամկետը 60 ամիս է. տեղաբաշխումը տեւելու է մինչեւ 2026 թվականի հունիսի 23-ը ներառյալ:

Պարտատոմսերը մարվելու են 2031 թվականի փետրվարի 23-ին:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողը պետք է լրացնի եւ Ակբա բանկ ներկայացնի պարտատոմսերի ձեռքբերման հայտ:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի թողարկած անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ ՄԻԱՑԵԼ Է

Ձգտելով զարգացնել նորարարական ծառայությունները եւ խթանել անկանխիկ վճարումների զարգացումը՝ Հայէկոնոմբանկը միացել է Իդրամի բաց QR ենթակառուցվածքին:

Այսուհետ AEB Mobile-ով կարող եք սկանավորել Idram QR-ը եւ կատարել անկանխիկ վճարումներ ավելի քան 26,000 վաճառակետերում:

Այս նորարարական լուծումը հնարավորություն է տալիս կատարել պարզ ու արագ վճարումներ՝ մեկ հպումով:

Շարունակաբար զարգացնելով մատուցվող ծառայությունների որակը՝ Հայէկոնոմբանկը ձգտում է ապահովել առավելագույն հարմարավետություն իր հաճախորդների համար:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՆԱՐԿՈԲԱՐՈՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեքսիկայում լայնածավալ բռնություններ են բռնկվել այն բանից հետո, երբ երկրի անվտանգության ուժերը ռազմական գործողության ընթացքում ոչնչացրել են ազդեցիկ նարկոբարոն Նեմեսիո Ռուբեն Օսեգերա Սերվանտեսին, որը հայտնի էր «Էլ Մենչո» մականունով: Մեքսիկայի պաշտպանության նախարարության տվյալներով՝ 59-ամյա Օսեգերան վիրավորվել է զինվորների հետ բախման ժամանակ Խալիսկո նահանգի Տապալպա քաղաքում եւ մահացել է Մեխիկո տեղափոխվելու ճանապարհին: Նրա ձերբակալման համար ԱՄՆ-ը սահմանել էր 15 միլիոն դոլարի պարգեւավճար: Օսեգերան ղեկավարում էր «Խալիսկո Նոր Սերունդ» կարտելը (Jalisco New Generation Cartel՝ CJNG), որը համարվում է երկրի ամենահզոր քրեական կազմակերպություններից մեկը: Գործողությունից հետո բռնությունների ալիք է բարձրացել առնվազն վեց նահանգներում՝ Խալիսկոյում, Կոլիմայում, Միչոականում, Նայարիտում, Գուանախուատոյում եւ Տամաուլիպասում: Ջինված անձինք հրկիզել են ավտոմեքենաներ եւ փակել մայրուղիներ:

Խալիսկոյի մայրաքաղաք Գուադալախարան, որը նախատեսվում է հյուրընկալել առաջիկա ՖԻՖԱ-ի աշխարհի առաջնության մի շարք հանդիպումներ, կիրակի երեկոյան գրեթե դատարկվել է. բնակիչները փակվել են իրենց տներում: Սոցցանցերում տարածված տեսանյութերում երեւում է, թե ինչպես են մարդիկ խուճապահար վազում օդանավակայանում: Խալիսկոյի նահանգապետ Պաբլո Լեմուսը բնակիչներին կոչ է արել մնալ տներում եւ կասեցրել է հասարակական տրանսպորտի աշխատանքը: Մի շարք նահանգներում երկուշաբթի օրը չեղարկվել են դասերը: Մեքսիկայի նախագահ Կլաուդիա Շեյնբաումը X սոցիալական հարթակում գովաբանել է երկրի անվտանգության ուժերին եւ կոչ արել պահպանել հանգստություն՝ նշելով, որ նահանգների կառավարությունների հետ առկա է «ամբողջական համակարգում», եւ երկրի մեծ մասում իրավիճակը վերահսկելի է:

Հիշեցնենք, որ Օսեգերան համարվում է վերջին տարիներին չեզոքացված ամենախոշոր մեքսիկացի նարկոբարոններից մեկը՝ Խոակին Գուսման («Էլ Չապո») եւ Իսմայել Սամբադայի ձերբակալություններից հետո, որոնք ներկայումս գտնվում են ԱՄՆ-ում՝ կալանքի տակ: ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Քրիստոֆեր Լանդաուն ողջունել է գործողությունը՝ Օսեգերային անվանելով «ամենաարյունալի եւ անողոք նարկոբարոններից մեկը» եւ այն որակել որպես «կարեւոր զարգացում Մեքսիկայի, ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի եւ ամբողջ աշխարհի համար»:

ԽՈՒՍԱՓԵԼ Է

Փետրվարի 23-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդի բարձրաստիճան հատվածին եւ հանդես է եկել ելույթով: Նա նախ շնորհավորել է Մարդու իրավունքների խորհրդի նախագահին եւ բյուրոյի անդամներին՝ ընտրվելու կապակցությամբ: Ապա ելույթում շոշափել է մի քանի թեմաներ, ներառյալ՝ Հայաստան-ՄԱԿ հարաբերություններ, «հիբրիդային սպառնալիքների ալիքներ», միջազգային իրավունքների խախտումների հանդեպ Հայաստանի մոտեցումը, եւ Հայաստան-Ադրբեջան հակամարտությունը:

Վերջինիս վերաբերյալ նախարարը նշել է. «Տասնամյակներ տեւած զինված հակամարտություններից եւ մարդասիրական ճգնաժամերից հետո Հայաստանը եւ Ադրբեջանը վճռական քայլեր ձեռնարկեցին մեր տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղության հաստատման ուղղությամբ: Անցյալ տարի Վաշինգտոնում կայացած խաղաղության գագաթաժողովը ոչ միայն խաղաղություն հաստատեց երկու երկրների միջեւ, այլեւ ճանապարհ հարթեց առեւտրի, փոխկապակցվածության եւ մարդկանց միջեւ շփումների համար: Այս ուղին կառավարությունների միջեւ ձեռք բերված համաձայնություններից անդին տանելու նպատակով մենք նաեւ սերմանում ենք մեր հասարակությունների, այդ թվում՝ տուժած բնակչության միջեւ իրական երկխոսության եւ վստահության հիմքերը»:

Նկատենք, որ Բաքվում պահվող հայ գերիների մասին խոսելիս նախարարը խուսափել է օգտագործել «գերի» եւ «պատանդ» եզրույթները: «Սա, անշուշտ, բարդ գործընթաց է՝ հաշվի առնելով, որ 19 հայ պահվող անձինք դեռեւս գտնվում են Բաքվում, առկա է անհայտ կորած անձանց ճակատագրերի պարզաբանման եւ բռնի անհետացումների դեպքերի բացահայտման անհրաժեշտություն, եւ միաժամանակ տարածվում են խեղաթյուրված պատմական նարատիվներ»:

Եզրափակելով՝ նախարարն ընդգծել է. «Չնայած բազմակողմ ինստիտուտների վրա առկա ահռելի ճնշմանը, մենք պետք է շարունակենք մնալ սկզբունքային լավատեսության կրողներ եւ հայտնենք մեր խորին համոզմունքը, որ մարդու իրավունքների համակարգը եւ Միավորված ազգերի կազմակերպությունն ինքնին այս գործընթացից դուրս կգան նորացված կարողություններով՝ միտված իրենց գլոբալ մանդատի իրականացմանը»:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԱԼՎԱԴՈՐԻ «ՄՈՆԱ ԼԻԶԱՆ»

ՈՐՄՆԱՆԿԱՐԸ 100,000 ՊԼԱՍՏԻԿ ՇՇԵՐԻ ԿԱՓԱՐԻՉՆԵՐԻՑ

Ֆրեսկոյի կերպարը Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզայի» վերաիմաստավորումն է՝ հարմարեցված Սալվադորի համատեքստին: Նկարչի խոսքով՝ դա որեւէ կոնկրետ անձի դիմանկար չէ, այլ սովորական քաղաքացու այլաբանական պատկեր:



Ինչպես տեղեկանում ենք Ewronews-ից, Սալվադորի Սակամիլ թաղամասում հայտնվել է մի որմնանկար, որը, նկարչի խոսքով, եզակի է աշխարհում: Այն ունի ավելի քան 13 մետր բարձրություն եւ պատրաստված է ավելի քան 100,000 պլաստիկ շշերի կափարիչներից:

Աշխատանքը ստեղծվել է 28-ամյա վենեսուելացի նկարիչ Օսկար Օլիվարեսի կողմից, ով տարիներ շարունակ թափոնները վերածել է փողոցային արվեստի մեծածավալ գործերի:

Ֆրանկվոյում պատկերված կերպարը Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզայի» վերաիմաստավորումն է՝ հարմարեցված Սալվադորի համատեքստին: Այն պատկերում է մուգ մաշկ ունեցող կնոջ՝ գանգուր մազերով՝ ազգային դրոշի գույներով:

Նկարչի խոսքով՝ սա որեւէ կոնկրետ անձի դիմանկար չէ, այլ սովորական քաղաքացու այլաբանական պատկեր:

Շշերի կափարիչները հավաքվել են Օլիվարեսի հարեւանների եւ ընկերների կողմից, ինչպես նաեւ նվիրաբերվել են թափոնների վերամշակողների կողմից: Աշխատանքը ստեղծելիս օգտագործվել են միայն պլաստիկի բնօրինակ գույները՝ առանց որեւէ լրացուցիչ ներկի: Արդյունքը ոչ միայն ռեկորդային նկար է, այլեւ քայլ դեպի Սակամիլի սրտում բացօթյա թանգարան ստեղծելու ուղղությամբ:

Օսկար Օլիվարես. «Պետք է ասեմ, որ այս աշխատանքի մեջ ամենակարեւորը ոչ թե վերաօգտագործվող կափարիչների քանակն է, այլ այն ազդեցությունը, որը այն ունի յուրաքանչյուր դիտողի, յուրաքանչյուր մասնակցի, յուրաքանչյուր մարդու վրա, ով հավաքեց կափարիչները: Որովհետեւ սա է, որ անհատներին, համայնքներին եւ ընտանիքներին տալիս է պլաստիկ թափոնների վերաբերյալ բոլորովին այլ տեսակետ»:

Օլիվարեսի աշխատանքը ցուցադրվել է 22 երկրներում: Այնուամենայնիվ, այս որմնանկարը մինչ օրս նրա կարիերայի ամենամեծն է: Նկարիչը այն պատկերացնում է որպես Սակամիլի քաղաքային արվեստի պոտենցիալ տեսարժան վայր:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

ԼԱՅԶԱ ՄԻՆԵԼԻՆ ՍՏԻՊԵԼ ԵՆ

Լեգենդար դերասանուհի եւ երգչուհի Լայզա Մինելին իր ինքնակենսագրականում՝ «Kids, Wait Till You Hear This!» գրքում, պատմել է 2022 թվականի «Օսկար» մրցանակաբաշխության ցնցող դրվագներից մեկի մասին. նա պնդում է, որ իրեն ստիպել են ելույթ ունենալ անվասայլակով՝ իր կամքին հակառակ:

Այն ժամանակ 79-ամյա Մինելին պետք է հայտարարեր «Լավագույն ֆիլմ» անվանակարգի հաղթողի անունը Լեդի Գագայի հետ միասին: Նա պլանավորել էր նստել ռեժիսորական աթոռին, բայց բեմ բարձրանալուց մի քանի րոպե առաջ նրան, իբր, հրամայել են ընտրել անվասայլակի կամ ներկայացումը թողնելու միջեւ:

«Նրանք ինձ ստիպեցին անվասայլակին նստել առանց բացատրության: Ասացին, որ դա իմ տարիքի եւ անվտանգության համար էր, քանի որ կարող էի աթոռից ընկնել: Լրիվ անհեթեթություն»,-գրում է Մինելին:

Արտիստը նշել է, որ դրա պատճառով նա ավելի կարճահասակ էր երեւում, քան կա, եւ չէր կարողանում կարդալ հեռահուշարարը: Ներկայացումը դժվար էր. Մինելին սխալվում էր իր խոսքերի հետ, իսկ Գագան աջակցում էր նրան բեմում՝ կրկնելով. «Ես Քեզ հետ եմ»: Բեմից դուրս գալուց հետո երգչուհին նույնիսկ այցելել է Մինելիին հանդերձարան՝ համոզվելու համար, որ նա լավ է:

Գրքում նաեւ քննարկվում են դերասանուհու անձնական պատմությունները, այդ թվում՝ նրա բազմաթիվ սիրավեպերը, սթափության ճանապարհը եւ հայտնի ընկերների հետ նրա զվարճալի արկածները:

Գիրքը լույս կտեսնի մարտի 10-ին:

ՀԱՂԹՈՂՆԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՆ

Բրիտանական կինոակադեմիայի BAFTA մրցանակաբաշխության ընթացքում ռեժիսոր Փոլ Թոմաս Անդերսոնի «One Battle After Another» («Պայքարը պայքարից հետո») ֆիլմը միանգամից 6 մրցանակ է տարել՝ դառնալով երեկոյի ամենատիտղոսակիր կինոժապավենը: Ինչպես հաղորդվում է, հեղափոխականների մասին պատմող ֆիլմը հաղթել է «Լավագույն ֆիլմ», «Լավագույն ռեժիսոր», «Լավագույն ադապտացված սցենար», «Լավագույն կինեմատոգրաֆիա», «Լավագույն մոնտաժ» անվանակարգերում: Ֆիլմի դերակատարներից Շոն Պենը հաղթել է «Երկրորդ պլանի լավագույն դերասան» անվանակարգում:

«Sinners» («Մեղավորները») ֆիլմը, որի պրոդյուսերների շարքում է ամերիկահայ Սեւ Օհանյանը, հաղթել է երեք անվանակարգում՝ «Լավագույն օրիգինալ սցենար», «Լավագույն երաժշտություն», ինչպես նաեւ «Երկրորդ պլանի լավագույն դերասանուհի»՝ Վունմի Մոսակուի մարմնավորած կերպարի համար:

Շեքսպիրի ընտանեկան ողբերգության մասին պատմող «Hamnet» («Համնետ») դրամայում մարմնավորած կերպարի համար դերասանուհի Ջեսի Բաքլին հաղթել է «Լավագույն դերասանուհի» անվանակարգում:

Շալամեի կենտրոնական դերակատարությամբ «Marty Supreme» («Հրաշալի Մարթի») սպորտային դրաման երեկոյի ընթացքում որեւէ մրցանակ չի շահել:

Ռեժիսոր Գիլերմո դել Տորոյի «Ֆրանկենշտեյն» ֆիլմը երեք մրցանակ է տարել արտադրական դիզայնի, կոստյումների դիզայնի, ինչպես նաեւ դիմահարդարման համար: «Լավագույն օտարալեզու ֆիլմ» է ճանաչվել նորվեգական «Sentimental Value» («Զգայական արժեք») ֆիլմը:«Լավագույն վիզուալ էֆֆեկտներ» անվանակարգում հաղթել է Ջեյմս Քեմերոնի «Avatar: Fire and Ash» («Ավատար. կրակ եւ մոխիր») ֆիլմը, իսկ «Լավագույն անիմացիոն ֆիլմ» է ճանաչվել «Zootopia 2»-ն («Զուտոպիա 2»):

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ֆրանսիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր ՊՍԺ-ն եւ կիսապաշտպան Ժոաու Նեւեշը երկարաձգել են համագործակցությունը, հաղորդում է ֆրանսիական Le Parisien-ը: 21-ամյա պորտուգալացի ֆուտբոլիստի նոր պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2030թ. հունիս: Նրա աշխատավարձը կբարձրանա: Ժոաո Նեւեշը 2024թ. ամռանն է պորտուգալական «Բենֆիկայից» տեղափոխվել ՊՍԺ: Ֆրանսիայի ընթացիկ առաջնությունում նա մասնակցել է 14 հանդիպման, խփել է 5 գոլ, կատարել 1 գոլային փոխանցում:

ՔՆՆԱԴԱՏԵԼ Է

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» գլխավոր մարզիչ Վենսան Կոմպանին քննադատել է պորտուգալական «Բենֆիկայի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոյին, որը Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորին մեղադրել էր Լիսաբոնում գոլ խփելուց հետո իր պարով երկրպագուներին սադրելու համար:

«Ինձ համար խաղից հետո տեղի ունեցածն ավելի վատ երեւույթ էր: Մոուրինյոն քննադատում էր Վինիսիուսին գոլը նշելու ոճի համար, որպեսզի վարկաբեկեր ֆուտբոլիստին: Դա մեծ սխալ է առաջնորդի տեսանկյունից: Մոուրինյոն հիշատակել էր Էյսեբիոյին, սակայն 60-ական թվականներին սեւամորթ ֆուտբոլիստների համար շատ ծանր ժամանակներ էին: Ես հանդիպել եմ Մոուրինյոյի հետ աշխատած բազմաթիվ մարդկանց: Նրանցից ոչ ոք Մոուրինյոյի մասին վատ բան չի ասել: Հասկանում եմ, որ նա պայքարում է իր ակումբի համար: Գիտեմ, որ նա լավ մարդ է, բայց ես նաեւ լսել եմ ասուլիսում նրա քննադատությունը Վինիսիուսի հասցեին: Այս դեպքում Ժոզեն սխալվել է: Հույս ունեմ, որ ապագայում այդպիսի բան չի կրկնվի»,-Կոմպանիի խոսքը մեջբերում է A Bola-ն: Չեմպիոնների լիգայի անցումային փլեյ-օֆֆի առաջին խաղում «Ռեալը» Լիսաբոնում «Բենֆիկային» հաղթել էր 1:0 հաշվով Վինիսիուսի գոլի շնորհիվ: Դիպուկ հարվածից հետո սեւամորթ ֆուտբոլիստը մոտեցել էր անկյունայինի դրոշակին եւ սկսել պարել՝ առաջացնելով լիսաբոնյան ակումբի ֆանատների դժգոհությունը: Վինիսիուսը հայտարարել էր, որ իրեն անվանել են «կապիկ»:

ԿԱՎԱՐՏԻ՞

Բրազիլական «Սանթոսի» եւ Բրազիլիայի հավաքականի 33-ամյա հարձակվող Նեյմարը չի բացառել, որ կարող է ավարտել ֆուտբոլիստի կարիերան: «Չգիտեմ, թե ապագայում ինչ է սպասվում ինձ: Հնարավոր է՝ տարեվերջում ավարտեմ ֆուտբոլիստի կարիերաս: Ապրում եմ այսօրվա օրով: 2026-ը վճռորոշ կլինի ինձ համար, ինչպես նաեւ «Սանթոսի» եւ Բրազիլիայի հավաքականի համար»,- Caze TV-ին տված հարցազրույցում ասել է բրազիլացի ֆուտբոլիստը: Հիշեցնենք, որ Նեյմարը հունվարին երկարաձգել էր պայմանագիրը «Սանթոսի» հետ, որը նախատեսված է մինչեւ 2026 թ. ավարտ: 33-ամյա բրազիլացի ֆուտբոլիստը 12 տարվա ընդմիջումից հետո «Սանթոս» էր վերադարձել 2025-ի հունվարին: Նեյմարն ամռանը Բրազիլիայի հավաքականի կազմում կմասնակցի աշխարհի առաջնությանը:

● *Փետրվարի 24-ին Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Սասունցի Դավիթ» բալետ-օրատորիան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞r դեպքերում է ամուսնալուծությունը կատարվում դատական կարգով:

Կարեն Գաբրիելյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

ա) բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը,

բ) ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց,

գ) ամուսինները ցանկանում են փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծվել դատական կարգով:

ՀՀ փաստաբանների պալատ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսիններից մեկի դիմումով ամուսնալուծության գործեր քննելիս դատարանը իրավունք ունի միջոցներ ձեռնարկելու ամուսիններին հաշտեցնելու համար եւ իրավունք ունի գործի քննությունը հետաձգելու՝ հաշտվելու համար ամուսիններին տրամադրելով մինչեւ երեքամսյա ժամկետ: Այս դեպքում ամուսնալուծությունը կատարվում է, եթե ամուսինները (նրանցից մեկը) պնդում են ամուսնալուծվելու համար: Ամուսնալուծության համար ամուսինների փոխադարձ համաձայնության առկայության դեպքում դատարանը լուծում է ամուսնությունը ամուսինների կողմից ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Աննա Մանուչարյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ա. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը համացանցից

Օրվա ամենահանգիստ «բողոքի ակցիան»՝ առանց կարգախոսների:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 2 - 7 + 2 + 7
	Կոտայքի լեռներ	- 2 - 5 + 3 + 6
	Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 + 9 +11
	Գեղարքունիք	- 2 - 7 + 1 + 4
	Լոռի	- 4 + 1 + 4 + 8
	Տավուշ	- 1 + 3 + 4 + 7
	Արագածոտնի լեռներ	- 3 - 6 + 1 + 4
	Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 4 + 8 + 12

	Արարատ	+ 1 + 4 +10 + 13
	Արմավիր	+ 1 + 4 +12 + 14
	Վայոց ձորի լեռներ	- 2 - 5 + 2 + 5
	Վայոց ձորի նախալեռներ	+ 1 + 5 +12 + 15
	Սյունիքի լեռներ	- 3 - 6 + 2 + 5
	Սյունիքի նախալեռներ	0 - 5 + 5 + 8
	Սյունիքի հովիտներ	+ 2 + 6 + 7 + 11
	Երեւան	+ 2 + 4 + 11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*